ՍՅՈՒՆԻՔ. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱ-ԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՆԱՅՔ

Գայանե Ղազարյան

Այս հետազոտական ֆոտոպատումը իրականացվել է Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ: Հետազոտության մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակին և կարող են չհամընկնել Հայաստանում կանանց հիմնադրամի տեսակետների հետ: 2025թ.:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Նախաբան

Հայաստանի զարգացման նեոլիբերալ քաղաքականությունը տարիներ շարունակ մեծամասշտաբ հանքարդյունաբերությունը ներկայացնում է որպես տնտեսական աճի հնարավորություն՝ արդարացնելով այն նոր աշխատատեղերի, օտարերկրյա ներդրումների և ՀՆԱ-ի աճի խոստումներով: Միևնույն ժամանակ, հանքարդյունաբերության դեմ քննադատությունն առավելապես կենտրոնացած է բնապահպանական խնդիրների վրա՝ անտառահատումներ, ջրային ռեսուրսների աղտոտում և թունավոր պոչամբարներ: Թեև այս խնդիրները ակնհայտ են և պահանջում են հրատապ լուծումներ, նման նեղ մոտեցումը ստվերում է թողնում հանքարդյունաբերության՝ առաջին հայացքից անտեսանելի թվացող սոցիալ-տնտեսական հետևանքները, մասնավորապես՝ գենդերային և դասակարգային ազդեցությունները:

Հանքարդյունաբերությունը ոչ միայն շահագործում է ընդերքն ու բնության բարիքները, այլև աշխատավոր դասակարգի և կանանց աշխատուժը, մարմինը, առողջությունը և ռեսուրսները՝ ստեղծելով շահույթ տեղացի և օտարերկրյա կապիտալիստների համար, մինչդեռ շահագործման և շրջակա միջավայրի ավերման հետևանքները կրում են հիմնականում սոցիալապես խոցելի խմբերը: Հետևաբար, հանքարդյունաբերության քննադատությունը պետք է դադարի բացառապես բնապահպանական խոսույթ լինելուց՝ ընդգրկելով նաև դրա գենդերային և դասակարգային հիմնախնդիրները:

Այս հետազոտական ֆոտոպատմությունը՝ հիմնված բանավոր պատմության մեթոդաբանության և մասնակցային դիտարկումների վրա, ուսումնասիրում է, թե ինչ ազդեցություն է ունենում հանքարդյունաբերությունը աշխատավոր կանանց վրա Սյունիքի մարզի Կապան և Քաջարան համայնքներում, որտեղ բնակչության ճնշող մեծամասնությունը կախված է հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքի հնարավորություններից:

Ֆոտոպատմության այս առաջին մասը հիմնված է ընդհանուր երկու ամիս տևողությամբ դաշտային աշխատանքի վրա, որի ընթացքում հանդիպել և հավաքագրել եմ Զանգեզուրի պղնձամոլդիբդենային կոմբինատի (ՁՊՄԿ) աշխատակիցների պատմություններն ու տեսակետները, ինչպես նաև ինքս ականատես եղել նրանց աշխատանքային և կենցաղային պայմաններին: Այս կանանց հետ հարցազրույցների և շփումների ժամանակ ես հանդես եմ եկել ոչ միայն որպես հետազոտող-լուսանկարիչ, այլև որպես երիտասարդ կին աշխատավոր՝ կիսելով նրանց ապրումները, մտահոգությունները և պայքարը՝ միևնույն ժամանակ գիտակցելով տարիքային և սոցիալական մի շարք տարբերություններ և հնարավորություններ, որոնք այլ կերպ են ձևավորել և ձևավորում մեր կենսափորձը (օրինակ՝ աշխատանքի այլընտրանքներ):

Տեսարան Քաջարանի բացահանքից, 2024թ.:

Հանքարդյունաբերությունը՝ ֆեմինիստական հարց

Էքստրակտիվ արդյունաբերությունը պատմականորեն կառուցված է որպես տղամարդկային ոլորտ: Հանքարդյունաբերության գենդերային բնույթը նշանակում է, որ արդյունաբերության ազդեցությունը կանանց վրա հիմնականում անտեսվում է ոչ միայն կորպորացիաների կողմից, այլև բնապահպանական արդարության խոսույթում: Շահագործվող[1] երկրներում հանքարդյունաբերական գործողությունների արդյունքում կանայք բախվում են մի շարք մարտահրավերների և ռիսկերի[2]՝

- Կանայք հիմնականում ընդգրկված չեն հանքարդյունաբերական աշխատանքների կամ պոչամբարների ընդլայման վերաբերյալ բանակցություններում, ինչը հանգեցնում է որոշումների, որոնք անտեսում են նրանց կարիքներն ու իրավունքները:
- Գումար աշխատելու նպատակով հանքարդյունաբերական համայնքներ տղամարդկանց ներհոսքը հաճախ հանգեցնում է գենդերային բռնության և սեռական շահագործման աճի:
- Հանքարդյունաբերությունից ստացված փոխհատուցումը և արտոնությունները հաճախ տրվում են տղամարդկանց՝ որպես ընտանիքի «գլխի»՝ զրկելով կանանց ֆինանսական ռեսուրսների հասանելիությունից և մեծացնելով նրանց տնտեսական կախվածությունը:

---

[1] Հրաժարվելով «զարգացող երկրներ» կամ «երրորդ աշխարհի երկրներ» եզրույթներից՝ անցյալում կամ ներկայում տնտեսապես գաղութացված ժողովուրդների մասին խոսելիս կօգտագործեմ «շահագործված» եզրույթը:

[2] Macdonald, I., & Rowland, C. (Eds.). (2002). *Tunnel vision: Women, mining and communities*. Oxfam Community Aid Abroad.

- Խնամքի պարտականությունների ավելացում. հանքարդյունաբերության հետևանքով շրջակա միջավայրի ավերումը և առողջական խնդիրները մեծացնում են կանանց՝ չվճարվող խնամքի աշխատանքը: Ավելին, ըստ «Օքսֆամ»-ի՝ ամբողջ աշխարհում կանայք կատարում են տղամարդկանցից 2.5 անգամ ավել չվարձատրվող խնամքի աշխատանք:
- Հանքարդյունաբերական աշխատանքներից տուժած համայնքներում հիմնականում կանայք են ջուր և սնունդ ապահովողները՝ ստիպված լինելով ոտքով անցնել երկար տարածություններ:

Կարևոր է նշել, որ չնայած վերոնշյալ մարտահրավերները տարածված են շահագործվող շատ երկրներում, Քաջարանի հանքը որոշ առանձնահատկություններ ունի՝ պայմանավորված Հայաստանի խորհրդային անցյալով: Խորհրդային շրջանում կառուցված լինելը նշանակում է, որ հանքարդյունաբերական քաղաքը նախագծված է եղել որպես աշխատավորական բնակավայր՝ հիմնական աշխատակիցները լինելով տեղաբնակներ: Այսօր էլ ՁՊՄԿ-ում աշխատողների 70%-ից ավելին տեղացիներ են: Դա կարող է նվազեցնել որոշ ռիսկեր, ինչպես օրինակ՝ գենդերային բռնության կամ սեռական շահագործման դեպքերի աճը, որոնք հաճախ ուղեկցում են տղամարդկանց զանգվածային ներհոսքին հանքարդյունաբերական տարածքներ: Բացի այդ, խորհրդային համակարգում կանանց մասնակցությունը արտադրական ոլորտներում կարգավորվում էր պետական քաղաքականությամբ:

Վերջին տասնամյակներին գենդերի հարցը դարձել է ուշադրության առարկա հանքարդյունաբերության վերաբերյալ հետազոտություններում: Այսօր արդեն գոյություն ունեն

մի շարք զեկույցներ և նախաձեռնություններ, որոնք միտված են ավելացնելու կանանց մասնակցությունը և նրանց շահերի պաշտպանությունը ոլորտում: Օրինակ, «Կանայք հանքարդյունաբերության մեջ» (*Women in Mining*, WIM) շարժումը, որը սկսել էր ձևավորվել դեռ 1980-ականների կեսերից, կարևոր դեր է խաղացել ոլորտում կանանց՝ հավասար հնարավորությունների և ոտնձգություններից զերծ աշխատանքային միջավայրի ապահովման խնդիրների բարձրաձայնման գործում:

Այնուամենայնիվ, WIM-ի նման շարժումների կամ կազմակերպությունների գործունեությունը հիմնականում կենտրոնացած է կանանց՝ հանքարդյունաբերական աշխատաշուկայում ներգրավվածության վրա՝ ներկայացնելով այն իբրև գենդերային հավասարություն և հաճախ շրջանցելով փաստը, որ կախված սոցիալական դիրքից, կանայք անհամաչափորեն են կրում արդյունաբերության հետևանքները կամ օգտվում ստեղծված հնարավորություններից: Օրինակ, ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանայք կարող են էապես տարբեր փորձառություններ ունենալ՝ համեմատ նրանց, ովքեր աշխատում են վտանգավոր, աղմկոտ կամ թունավոր միջավայրերում: Նույն կերպ, հանքում աշխատող կանայք, ովքեր ստանում են ֆինանսական փոխհատուցում կամ առողջապահական ծառայություններ իրենց աշխատանքի դիմաց, չեն կիսում այն նույն կենսափորձը, ինչ պոչամբարներից տուժած համայնքների կանայք, որոնց կենցաղը, սննդի, հողի և ջրի հասանելիությունը վտանգված են պոչամբարների պատճառով: Թեև այս երեք խմբերն էլ բախվում են խտրականությունների հայրիշխանական համակարգում, շրջակա միջավայրի հետ նրանց փորձառությունները տարբերվում են դասակարգային ու սոցիալական դիրքերից ելնելով:

Տեսարան Քաջարան քաղաքից, 2024թ.:

Տեսարաններ Քաջարան քաղաքից, 2024թ.:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրական շինություններից, 2024թ.:

Ողջի գետը, իսկ հետևում՝ հատված Քաջարանի բացահանքից, 2024թ.:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրական շինություններից, 2024թ.:

Կանանց աշխատանքը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում

Արտացոլելով հանքարդյունաբերության ոլորտում կանանց ներգրավելու նեոլիբերալ միտումները՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊՄԿ) հաճախ է նշում կին աշխատողների դերը՝ ընդգծելով, որ ընկերությունում կանանց ներկայացվածությունը գերազանցում է միջազգային միջին ցուցանիշները: Ըստ ԶՊՄԿ-ի 2024 թվականի վիճակագրության՝ կանայք կազմում են ընկերության աշխատուժի 22%-ը (1025 աշխատակից), որոնցից 48-ը ղեկավար պաշտոններ են զբաղեցնում: Թեև սա կարող է ներկայացվել որպես առաջընթաց կանանց տնտեսական հզորացման և գենդերային հավասարության ուղղությամբ, իրականությունն ավելի բարդ է:

Պետության՝ տարածաշրջանում այլընտրանքային տնտեսական հնարավորություններ ստեղծելու կամ եղածը պահպանելու ձախողման արդյունքում ԶՊՄԿ-ում աշխատանքը հաճախ կանանց համար ոչ թե մասնագիտական ընտրություն է, այլ անհրաժեշտություն: Կանանց պատումներում հաճախ կրկնվում է միտքը. «Եթե կոմբինատը չլինի, չգիտենք՝ ինչ պիտի անենք»՝ արտացոլելով համայնքի կախվածությունը կոմբինատից:

«Էսօր իմ աղջիկը ավարտել ա համալսարանի մագիստրատուրան: Արդյունաբերության հետ կապ չունեցող բաժին ա ավարտել՝ տուրիզմ: Մի քանի միջազգային կազմակերպությունների հետ աշխատել ա: Էս պահին ինքը ունի յոթ հատ դիպլոմ, առանց չափազանցնելու, ու չի կարողանում գործի մտնի: Երևանում աշխատում էր ինքը: Մի տարի էլ Լեհաստան ա աշխատել դպրոցում՝ որպես ուսուցիչ: Մի ամիս էլ գնացել ա [Լեհաստան]՝ որպես կամավոր: Բայց հիմա

ուզում ա մնա Քաջարան: 23 տարեկան աղջիկ էլ ունեմ, որ էս պահին փետով էլ ծեծես, չի գա: Էս մեկն էլ ուզում ա մնա Քաջարան, բայց գործ չի ճարում», - պատմում է կոմբինատի աշխատողներից մեկը[3]*:*

Ունենալով կրթական տարբեր որակավորումներ և մասնագիտական նախընտրություններ՝ աղջիկներն ու երիտասարդ կանայք չեն կարողանում իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնել Քաջարանում: Շատերը կա՛մ աշխատում են խանութում՝ ցածր վճարով, կա՛մ կրթություն ստանալուց հետո տեղափոխվում Երևան, կա՛մ էլ ստիպված են լինում սպասել հարմար հնարավորության ԶՊՄԿ-ում, որտեղ, ինչպես վկայում են կոմբինատում աշխատող կանանց պատմությունները, թափուր հաստիք գտնելը հեշտ չէ և կարող է տևել մի քանի ամսից մինչև մի քանի տարի:

[3] Կանանց անվտանգությունը և գաղտնիությունը ապահովելու նպատակով՝ որոշ պատմողների անուններ կա՛մ չեն նշվում, կա՛մ փոխված են:

Մարգարիտան՝ Քաջարանի իրենց բնակարանում, 2024թ.:

Մարգարիտայի տան պատուհանից երևում է լցակույտը:

40-ամյա Մարգարիտան յոթ տարի է՝ աշխատում է ՀՊՄԿ-ում՝ որպես հավաքարար: Երեք երեխաների մայրը պատմում է, թե ինչպես ընդունվեց աշխատանքի:

Յոթ տարի առաջ ես մոտեցա տնօրինությանը: Հոռով, մի կերպ, խնդրելով-աղաչելով, ես ինքս իմ ուժերով մտել եմ: Ինձ ո՛չ միջնորդ ունեի, ո՛չ մեջք ունեի, որ ինձ տանի: [Մինչ կոմբինատը] ամեն տեղ աշխատել եմ: Թվարկեմ՝ կասես, - «Մարգարիտա, ո՞նց ես էսքանը արել»: Հավաքարարություն եմ արել, լավաշը հանել եմ: Ես փուռում էի աշխատում, որ հղի էի փոքրովս: Որտեղ ասես՝ հավաքարարություն արել եմ, մաքրել եմ, գնացել եմ հյուրանոցը, որ էլ չի գործում: Էն ժամանակ, որ պրծել են, հավաքարար ա պետք եղել, տեղ եմ աշխատել սկիսուրիս հետ: Ընդեղից գնացել եմ դոմպռավում հավաքարարություն եմ արել: Հետո էկել եմ, «Բիլայն» էր բացվում առաջին տարիներին, ըտեղ մաքրել եմ: Նենց չի է՛, որ չեմ աշխատել: Էն ժամանակ քիչ էր՝ քսան քանի հազար փող էինք ստանում, քսաներեք: Էլի ոչինչ, էդ էլ էր բան, բայց որ սենց նայում եմ, ասում եմ՝ էս տարիներս էս ոնց ա անցե՞լ [կետադրությունը՝ հեղինակի, ըստ բարբառի], էսքան տեղ աշխատել եմ: Ես ինքս ինձ վրա զարմանում եմ:

Թեև Մարգարիտայի ներկա աշխատանքը անհամեմատելի է նախկինում ունեցած ֆինանսական պայմանների հետ, աշխատավարձը միշտ չէ, որ բավարարում է ընտանիքում բոլոր կարիքները հոգալու համար, հատկապես երբ երեխաներից երկուսն արդեն ուսանողներ են Երևանում: Երբեմն նա ստիպված է եղել այլ աշխատանքներ վերցնել՝ ծախսերը փակելու համար:

Իմ փողը 110,000 էր: Ես էնքան շատ եմ խոսացել՝ 30,000 են բարձրացրել, դառել ա 140,000: Բայց սա մեզ համար էլի մեծ բան ա: Դե ես հիմա հա՛մ ընդեղ եմ աշխատում, հա՛մ պոչտայում եմ աշխատում՝ հավաքարար: 40,000 փող են տալիս: Հիմա էլ մեկ-մեկ, որ ինձ կանչում են փուռ, ես հավեսով եմ գնում: Ես էդ [լավաշ] հանելու գործը շատ եմ սիրում: Կանչում են, մեկ-մեկ գնում եմ: Նենց չի էլի, որ վատ էլ ա վարձատրում. 500-600 լավաշ ենք թխում, 4350 դրամ փողն ա տալիս, 6 հատ էլ լավաշ: Բայց հիմա շատ ժամանակ ասում եմ՝ ինչի՞ս ա պետք: Իմ տղաս աշխատում ա, փառք Աստծո, ես աշխատում եմ, ամուսինս աշխատում ա, բայց դե...եթե կինը չաշխատի, իրա ձեռքին փող չլինի, պիտի ինքը լինի տղամարդու հույսին: Լավ բան ա, որ կինը աշխատում ա: Կինը պիտի աշխատի, որ իրա ձեռքին փող ունենա, որ կարողանա մի հատ տակաշոր առնի, որ ինքը հագնի: Ամեն անգամ չես գնալու տղամարդուն ասես՝ կարա՞ս ինձ էս 1500 դրամը [տաս]:

Մարգարիտան, ում աշխատանքը չի ենթադրում ուղիղ շփում քիմիական նյութերի կամ արտադրական փոշու հետ, հիմնականում գոհ է պայմաններից, եթե միայն չփորձեն չարաշահել նրա աշխատանքը: Նրա խոսքով՝ երբեմն իր աշխատանքային ժամերից ավելի երկար է մնում կամ ստիպված է իր աշխատանքային պարտականություններից դուրս հավելյալ աշխատանք կատարել, հաճախ՝ առանց հավելավճարի: Ըստ նրա՝ հրաժարվելու պարագայում եղել են դեպքեր, երբ աշխատակցի դեմ կիրառվել է ճնշում, ընդհում մինչև հեռացում, սակայն Մարգարիտան փորձում է հնարավորինս պաշտպանել իր իրավունքները:

Իմ աշխատանքս ինձ համար վատ չի, բայց եթե ինձ չուղարկեն ստեղ-ընդեղ, ասեն՝ գնա էսինչի տեղը պահի, որովհետև ես դրա համար չեմ վարձատրվում: Հավելյալ գործեր տալիս են, բայց

դրա համար ո՛չ մեկը չի վարձատրում: Եթե օտպուսկ են գնացել, քո հարկդ անում ես, բարձրանում վերևի հարկն էլ ես անում: Ես ինձ գործի տեղը պաշտպանում եմ: Ես թույլ չեմ տա: Հետո ի՞նչ անենք, որ դու պետ ես, ես՝ հավաքարար: Մեր մոտ շատ ա էղել, որ ուղարկել են, ասել են՝ գնա էսինչի տեղը մաքրի, տվյալ աշխատողը ասել ա՝ ոչ, ասել ա՝ դե ոչ՝ ոչ, դիմումը գրի, բեր ռաշյոտ արա: Ինձ իմ լավ աշխատանքի համար ա, որ չի հանում, բայց սա ինձ համար չնչին գումար ա: Եթե իմ ամուսնուս աշխատանքը փոխվի, ես էսքան չեմ պայքարի ոչ մի բանի համար: Չորսը հարյուր ինքն ա ստանում: Տղամարդու [համար] չորսը հարյուրը, երկու ուսանող էլ պահես, դպրոցական էլ ունես, ոնց կարա՞ս դու դա ապրես: Չես կարա:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գովազդային վահանակները Քաջարանում՝ «Մենք զարգացնում ենք մեր երկիրը» ուղերձով, 2024թ.:

Հայաստանում աշխատողների իրավունքների՝ հիմնականում ֆորմալ բնույթի պաշտպանության պայմաններում և ուժեղ արհմիությունների կամ կազմակերպված աշխատավորական մարմինների բացակայությամբ, աշխատողները հաճախ հայտնվում են առանց իրական պաշտպանական մեխանիզմների: Արդյունքում, առանց վարձատրության լրացուցիչ աշխատանք կատարելը դարձել է տարածված և ընդունելի պրակտիկա: Կոմբինատի այլ աշխատակիցներ ևս վկայում են նման փորձի մասին:

«Մեր մոտ երկուսից երեք հոգի մեկ բաժնում պետք ա աշխատի, չէ՞: Բայց մեզ մոտ հլը մեկն էլ պակաս ա: Վախտ ա լինում՝ մենակ ես աշխատում: Դառնում ա ես երեք-չորս հոգու տեղ եմ աշխատում նույն գումարով: Դա էլ չի արդար: Մի տարուց ավել ես մենակով եմ աշխատել», - նշում է 33-ամյա Անին, ով, ունենալով հաշվապահական կրթություն, ամուսնու մահից հետո աշխատանքի է անցել կոմբինատի տեխնիկական վերահսկողության տեղամասում: Ինչպես շատերի դեպքում, Անիի համար նույնպես կոմբինատում աշխատելու շարժառիթը եղել է ֆինանսական կայունությունը, քանի որ երեք անչափահաս երեխաների և տարեց մորաքրոջ խնամքն արդեն մեկուկես տարի է՝ իր ուսերին է:

Ես սովորել եմ Կապանի պետական ճարտարագիտական քոլեջում՝ որպես հաշվապահ, աուդիտոր: Շատ եմ սիրել ու հիմա էլ եմ սիրում էդ մասնագիտությունը, ուղղակի, որ շուտ ամուսնացա, չկարողացա տենց աշխատեմ: Իմ ամուսնու մահից հետո եմ աշխատել կոմբինատում: Իրա օրոք խանութում էի աշխատում, հետո ֆիզարձակուրդ էի: Իրա մահից հետո միանգամից ինձ վերցրեցին: Ճիշտ ա՝ երեք ամիս տևեց, բայց վերցրեցին, որովհետև ես երեք

երեխաներ ունեմ: Երևի քաջարանցիներից էն փոքրամասնությունից եմ եղել, որ չեմ ուզեցել էնտեղ աշխատեմ:

Ես որ էկել եմ ՕՏԿ [տեխնիկական վերահսկողության տեղամաս], չգիտեի՝ ինչ ա դա, բայց չէի պատկերացնում, որ անմիջապես կլինեի ֆաբրիկայի ներսում, սենց մեծամասամբ տղամարդկանց շրջապատում: Իրանք են քեզ ուղարկում էսինչ հիմնարկություն: Դա ես չեմ ընտրում՝ իրանք են ասում: Եթե ուզես, թե չուզես՝ էտ ա: Ընտրովի չի: Բայց համակերպվել եմ, լավ ա: Ֆիզիկական ծանր գործ չեմ անում, մենակ օրվա վերջը, որ վեդրոները՝ նմուշները լցված բերում ենք, 14 նմուշ: Միայն դա ա ֆիզիկական: Ուղղակի ավելի շատ պատասխանատու գործ ա: Պետք է ուշադիր լինես, ապահովես քո անվտանգությունը: Թվերը գրում ես, ճիշտ պտի հաշվես, արագի մեջ կողմնորոշվես, գաս, հասցնես, գրանցես, հաղորդես օպերատորին: Պատասխանատվությունը մեծ ա:

Հարստացուցիչ ֆաբրիկան, որտեղ վերամշակվում է հանքաքարը, 2024թ.:



Սուսաննան աշխատում է որպես կռունկավար հարստացուցիչ ֆաբրիկայում, 2024թ.:

Անին՝ հարստացուցիչ ֆաբրիկայում, 2024թ.:

Դրվագներ աշխատանքային առօրյայից հարստացուցիչ ֆաբրիկայում, 2024թ.:

Կոմբինատում քիչ չեն կանայք, ովքեր իրենց ընտանիքում միակ եկամուտ ստացողն են: 37-ամյա Արմինեն* (անունը փոխված է), ով ապրում է Կապանում, մինչ կոմբինատում աշխատանքի անցնելը նույնպես աշխատել է խանութում, սակայն հատկապես հոր մահից հետո ֆինանսապես չէր կարող հոգալ մոր և անչափահաս որդու մասին: Կոմբինատում հասանելի աշխատատեղերի սահմանափակ հնարավորությունների պարագայում նա կարողացել է աշխատանքի անցնել մեկ այլ կնոջ սոլիդարության շնորհիվ:

Ես ամուսնացել եմ, բաժանվել եմ: Մի տղա ունեմ: Մայրիկիս խնամքը իմ վրա ա, տղաս զինվոր ա հիմա: Ես եմ, մայրիկս, տղաս: Հոգսը ինձ վրա ա:

[Տարիներ առաջ] գնացել էի ուպրավլենու դեմը, բայց ավանդական դաստիարակությունից ելնելով, իմ պապան համաձայն չէր, որ ես կոմբինատում աշխատեմ: Ինքը կոմբինատի աշխատակից էր: Երեսուն տարեկան էի, բայց կապ չունի: Հայրիկս ասել ա, - «Դու տղամարդկանց մեջ չես աշխատելու»: Ասածը օրենք ա: Խանութներում էի աշխատում:

Կադրերի բաժնի վարիչը իմ հաճախորդն էր: Ինձ հետ մտերիմ էր, սիրում էր ինձ: [Որդուս] վատ տարիքն էր դպրոցում: Ամբողջ օրը էդ վարքի, անցումային տարիքի, ինձ դպրոցից զանգում էին, կանչում էին: Ես Կապան ապրում եմ, բայց Քաջարան աշխատում եմ: Չէի հասցնում դպրոցին ներկայանամ: Իմ համար էլ կարևոր էր իրա ուսումը, իրա վարքը: Մի անգամ գալիս ա, ջղայինացած եմ լինում տղայիս վրա հեռախոսով, գալիս ա, էդպես մտերմիկ զրույցի ժամանակ ասում եմ, - «Դե հազիվ կլինի, որ կադրերի բաժնի վարիչը դու լինես՝ ես խանութում կլռվեմ»: Ասում ա, - «Խի՞, դու ուզում ես կոմբինատում աշխատե՞ս: Ասում [եմ], - «Դե աշխատանք եմ

ուզում, թեկուզ հավաքարարի»: Դե կրթություն չունեի: Ի՞նչ կարող եմ երազել: Ասում ա, - «Վա՛յ, Արմինե, ո՞նց թե հավաքարար: Ափսոս չե՞ս դու հավաքարար լինես»: Ասում եմ, - «Բա ինչ անե՞մ, խանութից հաստատ լավ ա»: Խանութում 80,000 էի ստանում, հավաքարարը էլի 140,000 ա:

Մի երկու շաբաթ հետո եկավ, ասեց՝ դիմում ունե՞ս: Ասեցի՝ ոչ: Դրա համար մեկ-մեկ լինում ա իրան վատ բաներ են ասում բան: Իմ հանդեպ ինքը անշահախնդիր իսկապես: Ասեց, - «Դե լավ, ես մի բան կմտածեմ»: Ինքն էլ էր բաժանված: Հետո արեց, ասեցի՝ շատ շնորհակալ եմ: Ասեց, - Արմինե, ես էլ եմ քո կարգավիճակում: Քո համար չեմ անում: Քո տղայի համար եմ անում: Գնա աշխատի, տղայիդ պահի»:

Մի հինգը տարի հանդերձապահ աշխատեցի: Շատ գոհ էի: Միայն աշխատանքս որոշեցի փոխեմ, որ հայրիկս ինսուլտ տվեց, հիվանդ էր, հետո մահացավ: Կարիքը եղավ աշխատանքը փոխելու: 160-170,000 էր, բայց աշխատանքը հեշտ էր իրա գումարի համեմատ:

Աշխատանքը ֆլոտացիոն բաժնում, 2024թ.:

42-ամյա Լիլիթը 20 տարի է՝ աշխատում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Տարբեր հաստիքներ զբաղեցնելուց հետո, այժմ նա ջարդման տեղամասի գլխավոր մասնագետն է:

Ես երկու կրթություն ունեմ. նախկին Աստռովսկին եմ ավարտել՝ տուրիզմի բաժինը, իսկ էս վերջինը սովորել եմ Գորիսի պետական համալսարանում՝ մանկավարժություն: Էն ժամանակ տուրիզմը էդքան զարգացած չէր: Հիմա ա, որ տուրիզմի հետաքրքրվածությունը դեպի Սյունիք ավելի շատ ա: Որպեսզի անիմաստ տանը չմնամ, գտանք ավելի հարմար, որ ես մտնեմ աշխատանքի: Մտածեցի, որ կարող ա հետո փոխվի, բայց ոչինչ էլ չփոխվեց: Բայց էլի չեմ բողոքում: Փառք Աստծո:

Էստեղ համարյա բոլորը նույն աշխատանքն ենք կատարում. մեկը ավելի շատ ջարդման արտադրամասի հետ կապված, մեկը՝ ֆլոտացիոն բաժնի: Եթե չապահովես քեզ, աշխատանքը չի կարա իրա բնականոն ընթացքով գնա: Ցանկացած պահի կարող ա հանքաքարը ջարդվել, խփել աչքիդ ու վնասել: Նախօրոք բոլոր անվտանգության կանոնները ապահովում ես՝ դիմակը կրում ես, ձեռնոցները կրում ես, կոշիկներ ա հատուկ՝ դեմը երկաթով, ապահով:

460

Կանանց համար, ովքեր կիսվել են իրենց պատմություններով, կոմբինատում աշխատելու շարժառիթը հիմնականում եղել է «բարձր աշխատավարձը»՝ համեմատ կոմբինատից դուրս աշխատանքների: Ավելին, մինչ քիչ թվով կանայք (հաճախ ոչ տեղացի), զբաղեցնում են բարձր վարձատրվող պաշտոններ, աշխատավոր դասակարգի կանայք հիմնականում մնում են ավելի ցածր վարձատրվող, առողջության համար վտանգավոր հաստիքներում՝ արտացոլելով առկա դասակարգային անհավասարությունները: 2025թ. փետրվարի տասնմեկօրյա գործադուլի առանցքային պատճառներից մեկը աշխատավորական և վարչական անձնակազմի աշխատավարձերի ընդգծված տարբերությունն էր: Դասակարգային անհավասարության մասին է փաստում նաև կոմբինատում աշխատող կանանցից մեկը.

Սոցիալական անարդարություն ա: Արտադրությունում ոչ մի ղեկավարի կին, ղեկավարի քույրիկ, ղեկավարի աղջիկ չի աշխատում: Արտադրությունում աշխատում են մեր նման հոգսաշատ մարդիկ, որ իրանց պետք ա էտ աշխատանքը: Արտադրությունում աշխատում են այսպես ասած սոցիալական տուժած խավը էլի: Իրանք՝ ղեկավարները, իրանց կանանց, իրանց քույրիկներին ընդունում են գեղեցիկ, բաքսին քաշած, ակուռատնի կաբինետներում: Շտատեր կա, որ չգիտեն էլ էդ շտատը ինչի համար ա, հատկապես՝ ուպռավլենիում: Բոլորը քթները պլաստիկ վիրահատած աղջիկներ են, որ միայն տեսնում ենք՝ [ոնց] են ներս մտնում: Ինչի՞ համար են իրանք՝ ոչ մեկ հստակ չգիտի:

«Ասում ենք՝ հա, երկու հարյուր քանի հազարը մեզ համար էլի վատ չի, բայց որ նայում ենք, ութ ժամ մենք էն ցրտին նստելու տեղ չունենք, մի հինգ րոպե: Էն որ մենք անընդհատ դրսում ենք: Ութ ժամ մենք ֆաբրիկայով հավասար աշխատում ենք», - ասում է մեկ այլ աշխատող՝ ավելացնելով, - «հալա մենք ջահել ենք՝ չենք զգում, բայց մեծերը առողջություն չունեն»:

59-ամյա Մարինեն, ով կոմբինատում է աշխատում 1983թ.-ից, ունի մի շարք առողջական գանգատներ: Չնայած առողջության վատթարացումը կապում է տարիքի հետ, այնուամենայնիվ, համոզված է, որ աշխատանքային միջավայրը ևս թողել է իր հետևանքները:

Ունեմ ոտերի, ոսկորների, անոթների խնդիր: Կրծքի խնդիր ունեմ: Ապահովագրությամբ գնում եմ ստուգման, բայց էն, ինչ իրանք են անում... ԱՊՊԱ-ից մեզ էնքան հոգնցնում են, որ պահի տակ հոգնում ես, էնքան են ձգձգում: Բայց դե էլի որ կողքից օգնություն ա: Ստուգելը, հորմոնները բան չեն անում՝ դու ես վճարում, բայց սրտի վիրահատությունները պենը, իրանք փոխանցում են:

Ճիշտ ա՝ սա արտադրություն ա, բայց ոչ մեկին առողջական չունի: Ես որ իմ աղջկա տարիքի մարդկանց նայում եմ, էլ չեմ ասում, որ հիվանդ եմ: Բոլոր երիտասարդները առողջական խնդիրներ ունեն: Գիշերային հերթափոխը, էս հոտերը, ամեն ինչը ազդում ա մարդկանց վրա: Ամբողջ ֆաբրիկան նյութերի մեջ ա: Էդ նույնը մենք մշակում ենք: Չորացած ավելի բան ա [ուժգին], մանավանդ, որ փեչը բացում ես, հոտը գալիս ա: Պատկերացրու՝ դու ֆաբրիկում, էդ հոտը զգում ես: Որ չորանում ա, էդ հոտը ավելի շատ ա: Տաքին չենք դիմանում, բացում ենք՝

սկվազնյակ ա: Թոքերին վատ ա: Որպես կանանց հիմնարկ՝ ամեն ինչը ազդում ա: Էս հոտերը հերիք ա, որ ժողովրդի վրա ազդի: Կապ չունի՝ կաբինետում ա նստում:

[Երիտասարդ] ժամանակ չէի մտածում՝ ինչ կուզենայի աշխատեի: Սկզբնական որ էկա, գործս դուրս էկավ, շրջապատը: Էն ժամանակ շատ լավ էր անցնում: Ասենք կիրակի օրը դուրս էինք գալիս կոլեկտիվով, անտառ էինք քինում, հավաքույթներ էինք անում, շատ լավ էր: Առաջ չէի մտածում, բայց հիմա մտածում եմ՝ իմ սեփականը ունենամ: Մարդ իրա սեփականի համար աշխատի:



59-ամյա Մարինեն աշխատանքային հերթափոխից հետո տեխնիկական վերահսկողության տեղամասում:

Տեխնիկական վերահսկողության տեղամասի վառարանը:

Գործից առաջ՝ գործ, գործից հետո՝ գործ

«Ո՞վ ա ասել, որ ես քսանչորս ժամ պետք ա աշխատեմ. ութը՝ գործատեղ, տասնվեցն էլ՝ տանը»

Քաջարանում, որտեղ հանքարդյունաբերությունը գերակշռող դեր ունի տեղական տնտեսության մեջ, իսկ աշխատանքը հաճախ ֆիզիկապես ծանր և վտանգավոր է, կանայք բախվում են կրկնակի ծանրաբեռնվածության: Նրանք ոչ միայն անմիջականորեն ներգրավված են հանքարդյունաբերական տնտեսության մեջ, այլև կրում են աշխատուժի վերարտադրման հիմնական բեռը: Կախված հաստիքից՝ կանանց հերթափոխը կարող է սկսել առավոտյան 8:00, 16:00 կամ կեսգիշերին: Սակայն կանանց աշխատանքային օրը չի սկսում կամ ավարտվում վճարովի հերթափոխով: Հարստացման ֆաբրիկայում, քիմլաբորատորիայում կամ կոմբինատի այլ հիմնարկություններում երկար ժամեր անցկացնելուց հետո նրանք վերադառնում են տուն՝ սկսելու այն, ինչ սոցիոլոգ Արլի Հոքշիլդը կոչել է «երկրորդ հերթափոխ»[4]՝ ընտանիքի անդամների խնամք, ճաշի պատրաստում, մաքրություն:

[4] Hochschild, A. R., & Machung, A. (2012). *The second shift: Working families and the revolution at home* (Rev. ed.). Penguin Books.

«[Սմենը վերջանա], գնալու ենք տուն, հաց ենք սարքելու: Իմ տղաս ա աշխատանքի: Գալու ա, մինչև հաց, հաց ուտել, լվանալ, ճաշ սարքել, մտածել, որ վաղը ասենք ինքը տանը լինի, մունք՝ աշխատանքի, վաղվա համար մտածես. առօրյան էտ ա մեր»:

«Հիմա տուն եմ գնում, ես արդեն գիտեմ՝ ինչ եմ անելու. պիտի մտնեմ խանութ, էսինչ բանը առնեմ: Ես գիտեմ՝ գնալու եմ արագ-արագ էս խանութը, էն խանութը, ինձ էս ա պետք, էն ա պետք: Արագ մտնելու եմ տուն ու մինչև տասներկուսը խոհանոցից դուրս չեմ գալու. ճաշ, լվացք, հարդուկ: Հլը մեկ-մեկ էլ ասում եմ՝ լավ, է՛, եկեք յոլա տարեք: Չհարդուկեմ էլի: Փառք Աստծո, էրեխեքիս էլ եմ սովորացրել, անում են: Հիմա էն փոքր տղաս [ժամը] չորսի հերթափոխ ա ինքը: Ճաշը-բանը պատրաստած եմ: Փոքր չի: Ինքը գնալու ա, տեսնեմ՝ տաքացրել ա, կերել ա, հավաքել ա: Իրան ինչ անհրաժեշտ ա՝ վերցրել ա, եկել ա աշխատանքի: Բախտս բերել ա էդ հարցում որպես տղա երեխաներ»:

«Սոցիալական կյանք էլ չկա: Դե տղաները գտնում են մի բան: Ընկերական միջավայրում հավաքվում են, գնում են Ղափանի էս օբյեկտը, բայց մենք՝ արդեն մեր էն տարիքը չի էլի: Կուզեմ, շատ կուզեմ՝ մի հատ գեղեցիկ վայր լինի: Ո՞վ ա ասել, որ ես պիտի քսանչորս ժամ աշխատեմ՝. ութը՝ գործատեղ, տասնվեցն էլ՝ տանը»:

Ակնկալիքը, որ կանայք կոմբինատում կատարած հոգնեցուցիչ աշխատանքից հետո պետք է իրենց վրա վերցնեն նաև տնային գործերի հիմնական մասը, ընդգծում է կապիտալիստական և հայրիշխանական համակարգերի խաչվող բնույթը: Այն ցույց է տալիս, թե ինչպես են

տնտեսական համակարգերը հենվում կանանց անտեսանելի աշխատանքի վրա՝ աշխատուժի վերարտադրությունն ապահովելու համար, սակայն հրաժարվում վճարել:

Անին՝ բլիթներ պատրաստելիս:

Անին, ով ամուսնու մահից հետո երեք անչափահաս երեխաների հետ ապրում է մորաքրոջ տանը:

Օգտագործված գրականություն

Hochschild, A. R., & Machung, A. (2012). *The second shift: Working families and the revolution at home* (Rev. ed.). Penguin Books.

International Labour Organization. (2021). *Women in mining: Towards gender equality*. International Labour Organization.

Macdonald, I., & Rowland, C. (Eds.). (2002). *Tunnel vision: Women, mining and communities*. Oxfam Community Aid Abroad.

Oxfam Australia. (2017). *Position paper: Extractive industries and gender justice* (Version 1.5) [PDF]. https://www.oxfam.org.au/wp-content/uploads/2017/04/EI_and_GJ_position_paper_v.15_FINAL_03202017_green_Kenny.pdf